

Ծ Ա Ղ Ի Կ

Մ Ա Ն Կ Ա Ն Ց

Շ Ա Բ Ա Թ Ա Կ Ա Ն Ն Ա Ն Դ Է Ս

Դաստիարակութեան եւ Կրթութեան

ԾԱՂԻԿ ՄԱՆԿԱՆՑը կը հրատարակուի ամեն ուրբաթ or, իբաց առեայ Յունիս եւ Յուլիս ամիսները: Բաժանորդագիրնքն է ԿԱՆԻԻԿ, Պօլսոյ եւ գաւառաց համար, տասնամսեայ 50 դնեկն. հինգամսեայ 25 դանեկն, երկու եւ կիսամսեայ 15 դանեկան: Այլ երկրաց համար 12 ժրնք: Խրատանցիւր թիւը կ'արժէ 50 փարս: Գաւառներէն դրոճմարուրք ալ կ'ընդունուի: Բաժանորդագրութեան համար դիմել առ Տնօրէն— Խմբագիր Միհրան Աւանագ, Էսկի Զապրիէ հասէսի թիւ 61, Նշան Կ. Պէրպլէրեանի տարանը:

ՏԱՐՐԱԿԱՆ ԸՆԹԱՅՔ

Ը Ն Թ Ա Յ Ք

Վ Ե Ր Լ Ո Ի Ծ Ա Կ Ա Ն Ո Ճ Ո Յ (1)

Գ Ա Ս Գ.

ԴՊՐՈՑԱԿԱՆՆԸ ԵՒ ՇԵՐԱՄԸ

Գիշերօթիկ վարժարանի մը մէջ ծոյլ դպրոցական մը կար որ դրեթէ բնաւ ձեռքը դասագիրք չէր տուներ, և կը ձանձրանար փակուած արգիլուած ըլլալուն համար: Այս դպրոցականը ունէր շերամ մը որ իւր դրօսանքն և ուրախութիւնն էր: Օր մը տեսնելով որ իրեն պատեանը կը հիւսէ և այնու կը փաթթուի ու կը բանտարկուի, ըսաւ. «Միրելիս, այդ ի՞նչ մեծ անմտութիւն է. ի՞նչ օգուտ ունի որ այդպէս ինքզինքը կը բանտարկես»: Որդը տնոր պատասխանեց. «Առանց պատճառի չէ որ կ'աշխատիմ ինծի պատեան հիւսելու. աշխատութեանս և առանձնութեանս սըտտուղը պիտի քաղեմ. ընդհուպ թիթեանիկ

պիտի ըլլամ.» Այս խօսքերը կը պարունակեն խրատ մը որուն մէջ խմաստութիւնը կը փայլի, և որոյ խմաստը շատ յատակ է. եթէ շերամը պատեանը չհիւսէր, միշտ թրթուր պիտի մնար:

ՌԻՇԼԻ

Համառօտ Բովանդակութիւն. Ծոյլ դպրոցական մը կը ձանձրանար վարժարանին մէջ: Տեսնելով շերամ մը որ կը հիւսէր իւր պատեանը, կը մեղադրէ զայն ըսելով որ ինքզինքը կը բանտարկէ: Շերամը կ'ըսէ թէ ի վարձ իւր աշխատութեան, ընդհուպ թիթեանիկ պիտի ըլլայ:

Լ Ո Ի Ծ Ո Ի Մ Ն Գ Ր Ա Գ Ի Տ Ա Կ Ա Ն

1. Անձինք, տեղ եւ ժամանակ

Որո՞ց վրայ կը խօսուի այս առակին մէջ, — Ծոյլ դպրոցականի մը եւ շերամի մը վրայ:

Եղելութիւնը ո՞ր տեղի կ'ունենայ, — Դպրոցի մը մէջ:

2. Սոսի եւ գործ

1. Ինչո՞ւ կը ձանձրանար դպրոցականը: — Որովհետեւ ծոյլ էր:

2. Ի՞նչ էր իւր դրօսանքը: — Իւր դրօսանքն էր դիտել շերամ մը որ իւր պատ-

(1) Տես թիւ 11

եանը կը հիւսէր :

3. Ինչո՞ւ կը մեղադրէր զայն : — Որովհետեւ ինքն իրեն իւր բանտը կը շինէր :

4. Ի՞նչ պատասխանեց Շերամը : — Պատասխանեց թէ ի վարձ իւր աշխատութեան ընդհուպ թիթեռնիկ պիտի ըլլայ :

3. Արդիւնք

Շերամին պատասխանը ի՞նչ ազդեցութիւն ըրած ըլլաւ կը թուի դպրոցականին վրայ : — Անշուշտ միտքը դրաւ այլ ևս լաւ դործածել իւր ժամանակը :

Բարոյական

Այս առակը ի՞նչ խրատ կուտայ մեզ : — Այս առակը զմեզ կը խրատէ որ պէտք է աշխատիլ լաւ ապագայ մը ունենալու համար :

ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆ

1. Դպրոցական որո՞ւ կ'ըսուի : — Դպրոցական կ'ըսուի այն մանուկին որ դպրոց կ'երթայ :

2. Դպրոց գացող տղու մը ուրիշ բան ալ կ'ըսուի : — Դպրոց գացող տղու մը կ'ըսուի նաև առակերս :

3. Դպրոց բառին հոմանիշ մը գտէք : — Վարժարան :

4. Շատ փոքրիկ տղայոց դպրոցին ի՞նչ կ'ըսուի : — Ընկերարան, ծաղկոց, մանկապարտէզ :

5. Ո՞ր վարժարանները գիշերօթիկ կը կոչուին : — Գիշերօթիկ կը կոչուին այն վարժարանները որոց մէջ գիշերները կը կը մնան աշակերտները :

6. Ի՞նչ է ծոյլ բառին հակահիշը : — Ասխասատը :

7. 4 բառ գտէք ծոյլին հոմանիշ : — Յոյլ, պղերգ, հեղգ, բուլամորք :

8. Դպրոցի մէջ դործածուող քանի մը դասագրոց անուններ տուէք : — Ընթերցարան, բուարանութիւն, աշխարհագրութիւն, սրբազան պատմութիւն, քերականութիւն . ևն :

9 Ձանձրանալ բային դոյսակահը ըսէք : — Ձանձրոյթ

10. Ի՞նչ է շերամը : — Տեսակ մը թըրթուր է :

11. Շերամը ի՞նչ բանով կը սնանի : — Թրթեռնոց տերեւներով :

12. Մարդիկ ինչո՞ւ Շերամը այնքան խնամով կը սնուցանեն : — Որովհետեւ նա յառաջ կը բերէ բարակ և ազնիւ թել մը որ կը կոչուի մետախ :

13. Ի՞նչ ըսել է «իւր գբօսանքն եւ ուրախութիւնն էր» : — «Անով կ'գբօսուր եւ ուրախ էր այնպիսի կենդանի մը ունենալուն համար » ըսել է :

14. Ըսէ՞ք ուրախութիւն բառին հակահիշը : — Տխրութիւն :

15. «Այդ ի՞նչ մեծ անգնութիւն է» խօսքը ուրիշ կերպով բացատրեցէք : — Դու ս'ըջափ անմիտ ես :

16. Օգուտ բառին հոմանիշ մը գտէք : — Ծախ :

17. Անգնութիւն ընող մարդուն ի՞նչ կ'ըսուի : — Անմիտ :

18. Աշխատութիւն և առանձնութիւն բառերուն մէջ մէկ հոմանիշ գտէք, և յետոյ հակահիշներն ըսէք : — Հով : ջանք, միայնութիւն . Հակ . ծուլութիւն, ընկերութիւն :

19. Քանի մը առարկաներ ըսէք որ մտաքսէ շինուած ըլլան : — Թաւկիմակ, փոկպատ, ժապաւէն, ժանեակ, կերպաս ևն :

20. Պտուղ բառը հոս ի՞նչ կը նշանակէ : — Վարձ

21. Ի՞նչ կը նշանակէ բնդ հուպ : — Քիչ ասեցէն

22. Իմաստութիւն ունեցող մարդը ի՞նչ կը կոչուի : — Իմաստուն :

23. Ի՞նչպէս կը շարժին քիթեղնիկը եւ որդը : — Թիթեռնիկը կը թռչի, որդը կը սողայ :

24. Կը փայլի բառը ի՞նչ կը նշանակէ «որուն մէջ իմաստութիւնը կը փայլի» խօսքին մէջ : — Կերեւայ, կը յայտնուի, յայտնի է :

25. Շերամին շինած պատեանը ի՞նչ կը կոչուի : — Բժոժ :

26. Խօսքի մը իմաստը ե՞րբ յստակ է : — Երբ դիւրութեամբ կը հասկցուի այն :

Վ Ա Ր Ժ Ք

Ա .

Ո՞ւր կ'ապրին կէտը (ձուկն), իլուրդը, Տգուկը, որբալուիճը, այծեամբ, սկիւռը, հաւը :

Կէտը կ'ապրի ծովու մէջ : — Իլուրդը կ'ապրի հողոյն տակ : — Տգուկը կ'ապրի ձահիճներու մէջ : — Որբալուիճը կ'ապրի այգիներու մէջ : — Այծեամբ կ'ապրի անտառաց մէջ : — Սկիւռը կ'ապրի ծառոց վրայ : — Հաւը կ'ապրի հաւնոցին մէջ :

Բ .

Հետեւեալ նախագատութեանց կցել երկրորդ նախագատութիւն մը երբոր շաղկա-

պով սկսուած :

1. Պէտք է սր պաղ ջուր խմես :

— Պէտք է որ պաղ ջուր խմես, երբոր քրտնած ես :

2. Պէտք է մխիթարել իւր ընկերը :

— Պէտք է մխիթարել իւր ընկերը, երբոր վիշա մ'ունի :

3. Երկաթը կը ժանգոսի :

— Երկաթը կը ժանգոսի, երբոր խոնաւ տեղ դրուի :

4. Երկրագործը լաւ հունձքի մը թող չսպասէ :

— Երկրագործը լաւ նունձի մը քող չըսպասէ, երբոր իւր արտը լաւ մշակուած չէ :

5. Ուսուցիչը կը վարձատրէ իւր աշակերտը :

— Ուսուցիչը կը վարձատրէ իւր աշակերտը, երբոր սա լաւ կը պատրաստէ իւր դասերը :

Գ.

Հետեւեալ նախադասութեանց մէջ գըտնուած որակական ածականը որ յարաբերականով միջանկեալ նախադասութեան փոխել :

1. Խոնարհ մարդը ամենէն կը սիրուի :

— Այն մարդը՝ որ կը խոնարհի, ամենէն կը սիրուի :

2. Աստուած կը խոնարհեցնէ հպարտ մարդիկը :

— Աստուած կը խոնարհեցնէ այն մարդիկը որ կը հպարտանան :

3. Հեռու փախչինք չարախօս լեզուներէն :

— Հեռու փախչինք այն լեզուներէն որ կը չարախօսեն :

4. Դաստիարակները չեն սիրեր անհնազանդ մանուկները :

— Դաստիարակները չեն սիրեր այն մանուկները որ չեն հնազանդիր :

5. Ստախօսութիւնը գարեջի մտլութիւն մ'է :

— Ստախօսութիւնը մտլութիւն մ'է յորմէ պէտք է գարեջի :

Գ.

Հետեւեալ բառերուն մէկ ասուք պակասեցնելով ուրիշ բառ մ'ունենալ :

Բոյժ. ոյժ : Մտտեան. ասեան : Նիրհ. նին :

Գիրկ. գիր : Հանձար. հանար : Բայց. բաց :

Վայր. այր : Թանկ. քակ : Կարթ. կար : Ազի. ազ : Մայրի. այրի : Ծանօթ. անօթ : Ճապուռ. ապուռ : Կարկուտ. կրկուտ : Թաւիչ. աւիչ : Մարդ. մար : Նուշ. ուշ : Պատժել. պատել : Հմուտ. մուտ : Պատկառ. պատառ : Կաւր. կիւր : Իշխան. իշան : Յայտ. այտ : Դուսար. ուսար : Սաստ. սաս : Արջ. առ : Վտակ. սակ : Պարտ. արտ : Հարկ. հակ : Անգութ. անութ : Ոտոսյն. ոտսան : Գէշ. էտ : Ստուար. սուար : Կցորդ. կորդ : Շուռչ. ուռչ : Աշխարհ. աշխար : Քանքար. քար : Անդրէն. անդէն : Կարգ. կարգ : Շերամ. երամ : Աղօտ. աղտ : Փունջ. ունջ : Հպարտ. պարտ : Ե.

ԳԻԻՏ

ՇԵՐԱՄԸ

Հետեւեալ հարցմանց աշակերտք պարտին պատասխանել գրաւոր :

1. — Ի՞նչ է շերամը : — 2. Այս Թրթուրը ի՞նչ բանով կը մնանի : — 3. Ե՞րբ կ'սկսի հիւսելը : — 4. Ի՞նչ է բժոժը : — 5. Ի՞նչ բժոժը հիւսելէն յետոյ ի՞նչ կ'ընէ շերամը : — 6. Բժոժէն դուրս ելած ատենը շերամը ի՞նչ է : — 7. Բժոժը ի՞նչ բանէ շինուած է եւ ի՞նչ կ'ընեն զայն :

Շերամը տեսակ մը թիթեռնիկի թրթուրն է : Այս թիթեռնիկը հարիւրաւոր ձուեր կ'ածէ :

Ձուն փոքրիկ գորշ թրթուրի մը կը փոխուի որդի մը ձեռով, որ սովորաբար թիթեռնոյ տերեւերով կը մնանի :

Գրեթէ հինգ ամիս վերջը, հինգ կամ վեց հարիւրորդամէթր երկայնութիւն ունի եւ կ'սկսի հիւսել իւր բժոժը :

Բժոժը տեսակ մը պատեան է որ փոքրիկ թռչնոյ մը ձուին ձեն ու մեծութիւնն ունի :

Թրթուրը այս բժոժին մէջ ժամանակ մը փակուած կը մնայ :

Թիթեռնիկ վիճակի մէջ անտի դուրս կ'ելնէ : Այս թիթեռնիկը կ'ածէ ձուեր, յետոյ կը մեռնի :

Մարդիկ բժոժ ունենալու համար մանաւանդ կը սնուցանեն Շերամը :

Բժոժը շինուած է հազարաւոր բարակ թելերէ որոյմով վերջը կը շինուին այն գեղեցիկ հիւսուածները որոնք մետաքսեղէն կը կոչուին :

Մ. ԱՍԲԱՆԱՉ



ԱՌՈՂՋԱԲԱՆՈՒԹԻՒՆ (1)

ԵՐՐՈՐԴ ԽՅՍԱԿՑՈՒԹԻՒՆ

ԻՆՉՊԼՍ ՊԵՏԻ Է ՇԵՉԵԼ (Շար.)

Ասոնք այնպիսի զգուշութիւններ են զորոս ամէն մարդ կարող է ընել. եթէ գիտնայ անոնց օգտակարութիւնը: Եւ այսքան պարզ ու այսքան դիւրագնի զգուշութեամբ որջա՛փ կեանքեր չպիտի փրկուէին: Որջա՛փ ընտանիքներ կ'անցունեն գիշերըն նեղ սենեկի մը մէջ, խիստ ամրափակ, որոյ մթնոլորտն, առաւօտուն հեղձուցիչ հոտ մը կ'արձակէ:

Օղտախոտութիւնը շատ աւելի կարևոր կը դառնայ երբ ՍԵՆԵԿԻՆ ՄԷՋ ՀԻՒԱՆԻ ԼԻՆԻ: Եւ դիւրին է հասկնալ թէ ինչո՛ւ: Երբ աւելի պէտք է կրակը փչել: Այն ատեն, անշուշտ, երբ մարելու վրայ է: Սրդերը մէկն հիւանդ է, այն այրումը, որ կեանքն իսկ է, կը դանդաղի. կենդանի վառարանն այլ ևս կամայ կամայ կը վառի: Որջա՛փ վտանգաւոր պիտի լինէր յայնժամ շնչել տալ նմա վատաւողջ օդ որոյ մէջ թթուածինը քիչ ու բնածխական թթուն շատ լինէր: Ընդհակառակն, այն ատեն պէտք է մանաւանդ որ ընտիր, խիստ մաքուր օդ ծծէ, որպէս զի վերստին կենդանութիւն առնու անոր շիջեւամերձ բոցը:

Այս հարկը՝ զոր հիմա շատ լաւ կը հասկնաք դուք և որ բացորոշ կը թուի ձեզ՝ այս հարկն անծանօթ է բազմաց: Խիստ յաճախ հիւանդի մը սենեկին պատուհաններն ամրափակ ու դռներն ալ փակ կը պահեն այնպէս որ հիւանդին շնչած օդը չկրնար նորոգուիլ: Խեղճն՝ այս կերպով ընկզմեալ կը գտնուի մթնոլորտի մը մէջ որ հեղձեցէտ է կ'ապականի և հետզհետէ վտանգաւոր կը դառնայ: Եթէ դիտմամբ հիւանդին բժշկութեան համար ամէն յոյս ի դերև հանել ուզէինք, քան զայդ աւելի լաւ միջոց մը չպիտի կրնայինք գտնել: Եւ գործած պիտի լինէինք այնպէս որպէս թէ ուզէինք՝ շիջեւամերձ հուր մը արծարծելու համար՝ ամրապէս փակել ծխնեղջիկն և ուրիշ ամէն անցք ուրկէ կարող լինէր ներս թափանցել օդը:

Շատ անհեթեթ ու վտանգաւոր սովորութիւն մ'է այս, տղաքս, որմէ վախնա-

(1) Տես թիւ 42

լու էք միշտ: Ապագային, երբ մեծնաք, անշուշտ խնամելու հիւանդներ պիտ'ունենաք: Անոնց սենեկաց պատուհաններն ու դռները մի պատէք պնդէք կտաւով, թղթով, և մի փակէք զանոնք ազոտոս ու անաւողջ օդոյ մէջ: Ընդհակառակն, մեծ խնամք տարէք որ, կարելի եղածին չափ, մաքուր և խիստ կենսատու մթնոլորտի մը մէջ շնչէ նա:

— Սակայն, պիտի ըսէք ինձ, պէտք չէ՞ զգուշանալ որ հիւանդները պաղ չառնուն, օդոյ հոսանայ չենթարկուին:

Այո, անտարակոյս: Բայց, առանց հիւանդը պաղեցունելու, սենեկի մը օդը փոխելէն աւելի դիւրին բան չկայ: Կը բաւէ որ ինչ ինչ զգուշութիւններ ընենք. պէտք է գոցենք, զոր օրինակ, անկողնոյ վարագոյրներն, երբ վայրկեանպէս բանանք պատուհանները, և պէտք է վերստին բանանք վարագոյրներն, երբ փակենք պատուհանները: Սակայն, եթէ ամառ է, օդը տաք, չոր ու հանդարտ, աներկիւղ բաց թողէք յպատուհանները: Ներս մտցուցէք օդ ու արեգակ. իրենց հետ առողջութիւն կը բերեն անոնք:

Միևնոյն պատճառաւ պէտք չէ թողուլ որ՝ նեղ, նոյն իսկ չափաւոր սենեկի մէջ հիւանդի սնարին շուրջը նստին մնան բազմաթիւ անձեր: Այդ անձինք օդէն պիտի առնուին իրենց մասն թթուածնի որուն այնքան շատ պէտք ունի խեղճ հիւանդը, և պիտի նպաստէին թուճաւորելու մթնոլորտն՝ անոր մէջ թափելով բնածխական թթու:

Քիչ այցելութիւն և շատ օդ. ահա՛ ինչ պէտք է անոնց որք կը մաքաւին հիւանդութեան դէմ:

ԱՄՓՈՓՈՒՄ

ձերմակ ընտիր հացը քանկ է. աղասն ամէն օր չուսեր անկէ:

Բայց մտուր պասուական օդն ստակով չը ծախուիք. Ասուած ձրի կուսայ զայն հեզ. Բա՛ց պասուհանդ օդին. առողջութիւնն իսկ է որ անոր հետ պիտի մտնէ բնակարանիդ մէջ:

Ամէն առտու, երբ ելնես անկողնէդ, սենեկիդ պասուհաններն լայն արձակ բաց, որպէս զի գուրս ելնէ օդն գոր շնչած ես՝ զի՛ւսերը, եւ ներս մտնէ դրսի առողջ օդը:

Գարեահոս ու ապականեալ ջրոյ մէջ կու-

զէի՞ր լոգանալ: Ուրեմն աւխասէ՛ր նոյնպէս
որ ապականեալ ու գարշահոս օդոյ մէջ
չապրիս:


Հոն ուր օդ չմտնէր, մահն է որ կը մտնէ:

ԱՌԱՄՔ ԵՒ ՄՏԱԾՈՒԹԻՒՆՔ

Պէտք է շնչել տալ բնականին՝ որպէս
զի շնչեն բնակիչք:

Բաւական չէ որ կարասիք մաքուր ըլլան,
պէտք է նաեւ որ օդը մաքուր ըլլայ:

Կեանքն երկարելու հշմարիտ գաղափարն
էրն, անծամբ զայն չկարճեցնելո՞յն մէջն է:
Թարգ. Գ. Ա. ՄԱՆԱԹԵԱՆ



ՄԻՋԻՆ ԸՆԹԱՅՔ

Հ Ա Յ Ե Ր Է Ն Լ Ե Չ Ո Ւ

ՀԱՐԻՒՐ ԲԱՅԵՐ

6. ԱՌՆԵԼ

Այս բայով շինուած սեր

(Տես թիւ 15)

Ունչս առնել (ուժեք) . քրիս սակէն ծաղրել,
արհամարհել

Ուչ — (իմիք) . խելք սալ, աղէկ նայիլ, ջա-
նալ

Ուչ ի կուրծս — . յիշել, խելքը գլուխը
գալ, լու մտածել

Չարագան — (զոք) . չարաչար ծեծել, սան-
ջել

Չարալուկ — (զոք) . չարաչար սանջել

Չարամահ — (զոք) . չարաչար սպաննել

Չլուկըյն — (ինչ) . չլսելու զարնել

Չու — . չուել

Չպէտս — (իմիք, զիմեքէ) . անպէտ համա-
րել, փոյր չսանիլ

Ի Չպէտս — . անպէտ համարել

Ընդ Չտես — (զոք) . չեսեսելու զարնել

Պաշտօն(1) — (ուժեք) . քննիլ, շորհորթել,
աչառութիւն րնել

Պատասխանի — (ուժեք) . պատասխանել

Պատուհասակոծ — (զոք) . սաստել, յան-
դիմանել

(1) Չմիւսն ոչ կամեցան յուելուլ . քանզի պատեօն
իմն առնիլն թագաւորին: Ոչ պատեօն ինչ առնելով,
և ոչ ի ցոյցս ինչ գրեցին զոր գրեցին: Ոսկ. մեկն. մքր:

Պարանցիկս — . պարել

Պարուտակատ — (ինչ) . բարակ մաշկը
պատնել

Պարտ — (զոք) . յանցաւոր ընել

Պարտաւոր — (զոք) . դատապարտել

Պէտ — (զիմեքէ) . հոգ սանիլ

Ջերմակիծ — (ինչ) . այրել, տոչորել

Ջլապինդ — (զոք) . ջիղերը գորացունել

Ջրասոյզ — (զոք) . ընկղմել

Սանձաբեկ — (զոք) . սանձահարել

Սանձակոծ — (զոք) . սանձահարել

Սանձակոտոր — . սանձը կոտրել

Սաստիակոծ — (զոք) . սաստիկ յանդիմա-
նել

Սկիզբն — (ինչ) . սկսիլ

Սմբակակոխ — (ինչ) . սմբակին սակ հզմել
(էզմէք)

Սովարեկ — (զոք) . անօրութեամբ սանջիլ

Սովամահ — (զոք) . անօրի մեռցունել

Սովատանջ — (զոք) . սովով սանջել

Սուսերահար — (զոք) . սրով զարնել, ըս-
պաննել

Սուտ — (ինչ) . սուտ հանել

Սուրբ — (ինչ) . սրբացունել

Սպաս — (ուժեք) . ծառայել, սպասել.

դիտել

Սպարափակ — (ինչ) . պահապան զօրով
բոլորսիք առնել

Սրտապախ — (զոք) . շատ վախցունել

Սրտաուռ — (զոք) . սիրք կոտրել

Վաճառակուր — (զոք) . գերի ծախել

Վատտակարեկ — (զոք) . յոգնեցունել

Վեր ի վայր — (ինչ) . սակն ու վրայ ընել

Վէրս — . վիշաւորել

Տարագիր — (զոք) . ախտել, վանել

Տեսազերծ — (զոք) . կողոպտել

Տես — . աչքէ անցունել, լրեստել

Տոչմորս — . ցեղերը զատել

Տոյց — . ցոյց ընել, պարծիլ

Փախտտական — (զոք) . փախցունել

Փախտտեայ — (զոք) . փախցունել

Փառաւոր — (զոք) . փառաւորել

Փարաւար — . մխիթարել

Փարելի — (զոք) . աղաչել

Փոյթ — (իմիք, զիմեքէ) . ջանալ, հոգ սանիլ

Փոքրոգի — (ինչ) . քեքեցունել

Քաղահան — (ինչ) . քաղիլ

Քաջեփ — (ինչ) . աղէկ եփել

Քարալից — (ինչ) . քարով լեցունել

Քարակոչկոծ — (զոք) . քարկոծել

Քարածիգ — (ուժեք, ի վերայ իրիք) . քար
նեցել

Քարավէժ — (զոք) . քարկոծել, քարձ
նեցել

Քարկոծ — (զոք) . քարկոծել

Ի Քուռն — (զոք) . քնացունել

Օթ — . օթեւանիլ


Օթեակս — . օթեւանիլ

Օթեանս — . գիտերը օթեւան մը իջնել

Օն եւ օն — (ինչ, զոք) . սանկ ու նանկ ը-
նել

Օր ի յօր — (ինչ) . օրէ օր ձգել

Մ. ԱՍԳԱՆԱԶ



ԸՆԹԱՅԲ ԲՆԱԳԻՏՈՒԹԵԱՆ

ՆԱԽՆԱԿԱՆ ԳԻՏԵԼԻԻՒԹ (1)

5. Երբ մարդկային արեան մասը կաթիլ
մը մանրադէտի տակ քննեմք, պիտի տես-
նենք գեղնորակ հեղուկ մը սէրում (sérum)
անուանեալ որոյ մէջ կը լողան անհամար
կարմիր գնդակներ որոց ամէն մէկն երկու
երեսներէն տափակցած է և սկաւառակի
ձևն ունի: Արեան մէջ կարմիր գնդակներէն
զատ կան նաեւ անգոյն գնդակներ որք
չատ քիչ են թուով, ուստի այս վերջիններն
զանց կ'ընենք: Մէն մի գնդակ $\frac{1}{125}$ միլի-
լիմէթր տրամագիծ ունի. այս հաշուով մէկ
լիտրանարդ միլիմէթր, այսինքն գնդակներն
գլխուն չափ պարունակութեան մը մէջ
125×125×125 կամ իբր երկու միլիոն գըն-
դակներ կը սեղմուին. և որովհետեւ արեան
մէջ սէրում և գնդակներ կէս առ կէս են,
ուրեմն գնդակներ գլխուն չափ արեան կա-
թիլի մը մէջ իբր մէկ միլիոն գնդակներ
կան:

Ազականեալ ջուրերու — կենդանական
և բուսական մնացորդներու փառութեամբ
ազականեալ — մէկ կաթիլն մանրադիտա-
լին կենդանեաց աշխարհ մ'է կարծես. հոն
կը տեսնուին հազարներով մին քան զմիւսն
տձեւ և անհեթեթ կենդանիներ որք կ'ապ-
րին, կ'երթան ու կուգան. անոնք էնֆիւ-
զուսո (infusoir) կը կոչուին, շատ աւելի
փոքր են քան արեան գնդակներն: Եւ մը-
տածել թէ ասոնցմէ ոմանք թեւեր կը կրեն,
ոմանք բազմաթիւ մանր ցցուածներ ունին

(1) Տես թիւ 15 :


իրենց գլխուն վրայ բրբռուն բարբիչ (cil
vibratile) անուանեալ, ունին անշուշտ մաս-
նաւոր բացուածներ ուսկից ներս կ'ընդու-
նին սնունդ, ունին շնչառութիւն, արեան
չրջան, շարժմանց գործարաններ, եւայլն:

6. Ամէն ոք գիտէ թէ արեւուն ուղղա-
կի ճառագայթներուն մէջ փոշուով լի սիւն
մը կ'երևի պատուհանէն դէպ ի սենեկին
տախտակամածը երկարած. հոն փոշիներն
անդադար կը շարժին, կ'ելեն ու կ'իջնեն.
ասոնք անհամեմատ կը շատնան երբ սենեկի
օդն աւելի յուզուի, այսինքն բուն շար-
ժումներ կատարուին յաճախ: Փոշիք յառաջ
կուգան նոյն իսկ սենեկին մէջ մեր հան-
դերձներուն, մեր կօշկաց, տախտակամա-
ծին կամ զայն ծածկող գորգին և սենեկին
ուրիշ առարկայներուն գործածութեամբ
մաշուելէն: Մաշուել, ըսել է առարկայէ մը
մանր մասեր խլուիլ: Այդ մասեր գետին
թափած ցիր ու ցան, առաւել կամ նը-
ւազ մանր, առաւել կամ նուազ ծանր,
սենեկին մէջ օդոյ շարժումներով կը վեր-
ցուին. թեթեւ շարժում մը օդոյ, թեթեւ
հով մը՝ փոշոյ մանր հատիկները կրնայ վեր-
ցնել, աւելի մեծ հով մը՝ աւելի խոշոր
հատիկներն: Բայց քանի որ սենեկի մը մէջ
անգամ, որչափ ալ զգուշութեամբ ընդհա-
տուած ըլլանք արձակ օդէն, օդոյ բաց-
արձակ հանդարտութիւն տեղի չունենար,
որովհետեւ ձեւքի, աչքի շարժում մը, ճան-
ճի մը թաշիւր, ևլն, կրնան օդը յուզել,
ուստի օդոյ մէջ ամէն կողմ միշտ փոշիկայ:
Փոշիներն դուրսէն ալ կրնան մտնել ի սեն-
եակ ամէն օգաւորմանց պահուն, այն ա-
տեն հանքային նիւթեր ալ (քարի, հողի
փշուրներ կը գտնուին, ինչպէս նաեւ բու-
սոց հունտեր, ափօրներ (spore), փոլէններ
(pollen), ևս և մանրիկ կենդանիներ, միք-
րոպներ որք ամենայն տեսակօք և միլիոն-
ներով կրնան գտնուիլ երբեմն և պատճառ
կ'ըլլան սոսկալի հիւանդութեանց:

Բայց թէ ինչո՞ւ արեգական ուղղակի ճա-
ռագայթներուն սակ միայն կը տեսնուին
փոշիք, պատճառը պարզ է: Միլիմէթրին
մինչեւ $\frac{1}{10}$ ը կրնանք տեսնել եթէ լաւ լու-
սաւորուի, և որովհետեւ ցրուեալ լոյսը
(lumière diffuse) բաւական չկրնար լուսաւո-
րել այդ մանրիկ մարմինները, ուրեմն օդը
աւելի մաքուր պիտի երևի շուք տեղեր քան
արևուն լուսաւորած կողմերը, ամառը հո-

ժոտ օրեր շուքէն գացող մը ինքզինքն զերծ հը կարծէ այն ժողույ մառախուղէն զոր հը տեսնէ արեւուն կողմը, մինչդեռ այնքան ժողի իր կողմն ալ կայ: Արեգական լուսաւորած կողմը այնքան միայն չէ ժողույ քա նահութիւնն որքան կ'երևի, մեծ հատիկներն են միայն որք հը տեսնուին, փոքրերն աւելի շատ են հաւանականորար բայց չեն երևիր: Եթէ աւելի ուժգին ըյս մը հոյթայթ ուէր, փոշիներուն թիւը պիտի եւապատկուէր:

(Հարու նակիլի) ԵՆՈՎՔ ԹԷՑԵԱՆ



ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ԸՆԹԱՑՔ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅ ԴՊՐՈՒԹԵԱՆ⁽¹⁾

ՀՆՉՈՒՄՆ ՀԱՅ ՏՆՈՒՑ

Մեր այբուբենի գիրերէն ոմանք ունին կրկին հնչումն, արևելեան և արևմտեան արևմտեանն դարձեալ կրկին է, գրագիտաց և առակին: Ազգին գիտնոց մէջ շատ անգամ եղած է վէճ թէ ո՞ր հնչումն է ուղիւ: Դժուարութիւնն է նուրբ և միջին, այսինքն՝ պ, կ, ս, ծ, ն, և բ, գ, դ, ձ, ջ նշանագրաց համար: Թաւերուն համար որ են ք, փ, ք, ց, չ, չկայ դժուարութիւն, քանզի սոքա ամենայն ուրեք հը հնչուին միօրինակ:

Արևմտեանց գրագետ մասը միջին գիրերը, բ, գ, դ, ձ, ջ հը հնչէ իբրև փ, ք, բ, ց, չ, ուստի բարք և փառք, գոզ և քոզ, դոզ և քոզ, ձոզ և ցոզ, ջինջ և ոչինչ, ունին ըստ նոցա միևնոյն հնչումն, այնպէս որ նոքա որ չեն գիտեր այս բաւերուն ուղղագրութիւնը, եթէ գրեն ըստ լրոյ միայն, կրնան սխալել, այսինքն՝ կրնան բարքը գրել փով փարք, և փառքը գրել բով՝ բառք: Արևմտեան անգրագետ մասը որ դպրոցէ ելած չէ, միջին բ, գ, դ, ձ, ջ, գիրերը հը հնչէ իբրև նուրբերը պ, կ, ս, ծ, ն, ուստի բան հը հնչուի առակէն պան, գոգ՝ կոզ, դուն՝ սուն, ձեւ՝ ձեւ, ջնջոց՝ ննջոց, այնպէս որ նոքա որ անգէտ են հա-

յերէն ուղղագրութեան, եթէ ըստ հնչման առակին գրեն, կրնան բանը գրել պով պան, գոզ՝ կով, կոզ, դուն՝ սով, տուն, և այլն: Թէպէտ այս, այսինքն բ, գ, դ, ձ, ջ միջիններն իբրև նուրբերը պ, կ, ս, ծ, ն, հնչել ընդհանուր չէ նոյն խակ առակին բերանը, զորօրինակ, ՚ գրէն ետքը միջիններն հը հնչուին ըստ հնչման գրագիտաց, և ոչ ըստ հնչման առակին. այսպէս սուրբ, սրբել հը հնչուի թէ՛ գրագէտներէն և թէ՛ առակէն սուրբի, սրբել, և ոչ սուրպ, սըրպել: Երբ մտկոյցը հը հնչուի երբի և ոչ երպ, հարած հը հնչուի հարիած և ոչ հարած, կարգել հը հնչուի կարքել և ոչ կարկել, վարդ հը հնչուի վարթ և ոչ վարա, վարձ հը հնչուի վարց և ոչ վարծ, վերջ հը հնչուի վերջ և ոչ վերձ: Ըսել է թէ արևմտեան առակին ևս չէ բոլորովին անգէտ միջին բ, գ, դ, ձ, ջ գրերուն այն հնչման զոր կուսայ նոցա գրագէտ մասը: Իսկ նուրբ գիրերը, պ, կ, ս, ծ, ն, հը հնչուին միշտ ամենէն առ հասարակ իբրև նուրբ, այսինքն՝ իբրև լաս, Ե, Դ, Գ, և ոչ երբէք իբրև միջին բ, գ, դ, ձ, ջ. ուստի արևմտեան առակը չհնչեր երբէք պատիւը՝ փաթիւ, կատուն՝ քաթու, ծոււր՝ ցոււ, ճանճը՝ ջանջ: Միով բանիւ, արևմտեան առակը հը փոխէ միջիններն ի նուրբ, բայց ոչ երբէք նուրբերն ի միջին (ըստ հնչման գրագիտաց):

Ի՞նչ է ուրեմն առակին այս փոփոխութեան պատճառը: Գիտելի է զի, ինչպէս յուշարէն, նոյնպէս հայերէն, նուրբ գիրերն են պարզ, միջիններն են պարզերուն թանձրացեալը կամ հնչականը, (aspire) կամ գրով ցուցնենք, մեր միջինները, բ, գ, դ, ձ, ջ, են իբր պն, կն, սն, ծն, նն, ինչպէս յուշարէն միջիններն ք, ց, չ, են լատին գրով bh, gh, dh, (յուշարէն այս երեք գիրերուն զօրութիւնն այսպէս ցուցուած է, « Այբուբենը արևելեան և արևմտեան լեզուաց, Ֆրիտրիք Պալչօրն »), խակ թաւերն փ, ք, բ, ց, չ, են բն, գն, դն, ձն, ջն, կամ նուրբերուն կրկին հնչականը պնն, կնն, սնն, ծնն, ննն, (նոյնպէս իմա յուշարէն թաւերուն համար ք, ց, չ, որ են քան զք, ց, ձ աւելի հնչական, և հը ցուցուին լատին գրով ph, ch, th): Որովհետեւ առակը սովոր է միշտ պարզել, այսինքն՝ հնչականը փոխել պարզի կամ նուազ հնչականի, երբ միջիններուն հնչականութիւնը, ն, հը վեր-

(1) Տես թիւ 15

ցունէ, միջինք կը փոխուին ի նուրբ, այսինքն՝ բ որ է պհ, հի բարձմամբ լինի պ, գ որ է կհ՝ լինի կ, դ որ է սհ՝ լինի ս, ձ որ է ծհ՝ լինի ծ, ջ որ է նհ՝ լինի ն: Իսկ թաւերը փ, ք, ք, որ կրկին հնչական են, կամ միջիններուն հնչականն են, բհ, գհ, դհ, ձհ, ջհ, հնչականին վերնալուր կը հաւասարին բ, գ, դ, միջիններուն, ուստի և չեն կորուսաներ իրենց թանձր հնչումը: Այս բաւական է ցուցնելու թէ բ, գ, դ, ունին ի բնէ գրեթէ այն հնչումը զոր կուսայ նոցա արեւմտեան գրագէտ մասը, այսինքն՝ մտ փի, քի և քի:

Չայս ըսինք արեւմտեանց համար, իսկ արեւելեանց հնչումն է բոլորովին տարբեր: Սոքա ևս թաւ գրերն ք, փ, ք, հնչելով այնպէս ինչպէս կը հնչեն արեւմտեանք առհասարակ, նուրբ՝ պ, կ, ս, և միջին՝ բ, գ, դ, գիրերուն հնչումները կը թուին փոխանակել, այսինքն՝ պ, կ, ս հնչելով բ, գ, դ ըստ հնչման արեւմտեանց գրագէտ մասին, և բ, գ, դ, հնչելով պ, կ, ս ըստ հնչման արեւմտեանց: Եւ այսմ տարացոյց է նոցա տառադարձութիւնն զոր կ'ընեն արդի եւրոպական յատուկ անուանց վրայ, գրելով զNapoléon՝ Նապոլէոն, զBoston՝ Բոստոն, զAmerica, Ամերիկա, զորս, ինչպէս յայտնի է, պարտ է կարգաւ ըստ եւրոպական հնչմանց, և ոչ ըստ օրինաց հին տառադարձութեան կամ ըստ հնչման արեւմտեանց. ուստի և բ, գ, դ, լինի ըստ նոցա պ, կ, ս, (b, g, d), և պ, կ, ս՝ լինի բ, գ, դ (p, c, t). Թէպէտ կ'ըսեն թէ ոչ զբ, գ, դ կը հնչեն իրեն պ, կ, ս ըստ արեւմտեանց, և ոչ զպ, կ, ս՝ իրրեւ բ, գ, դ նոյնպէս ըստ արեւմտեանց այլ բոլորովին տարբեր միջին իմն հնչմամբ: Բայց թողունք որ այս միջին հնչումն անզգալի է գէթ մեր (արեւմտեանց) սկանջներուն, արդի յառակ անուանց ուղղագրութիւնն ըստ նոցա, ինչպէս ըսինք, կը ցուցնէ հակառակը, այսինքն թէ բ, գ, դ և պ, կ, ս գիրերուն հնչումներն իրարու յետս ընդդէմն են արեւելեանց և արեւմտեանց մէջ:

Ի զորէ մետրոպեանայբուրէնի գիրերուն Յունարէնի հետ համեմատութենէն ջանալ ցուցնել թէ բ, գ, դ պարտին հնչուիլ պ, կ, ս, վասնզի այն գիրերը կը պատասխանեն յունարէն այբուբենին β, γ, δ գիրերուն: Բայց այս համեմատութիւնն ցուցանէ ոչինչ. նախ վասն զի Յունաց այն գրերը, β, γ, δ ու-

նին բոլորովին տարբեր ազգային հնչում, և հայերէն բ, գ, դ կը պատասխանեն նոցա ըստ զօրութեան և ոչ ըստ հնչման, երկրորդ, եթէ Մետրոպեան գիրերուն յունարէնի հետ համեմատութենէն պիտի դըռնենք մեր գիրերուն հնչումը, ապա պ, կ, ս պիտի հնչուին իբր բ, գ, դ արեւմտեանց, քանզի այն գիրերն Մետրոպեան այբուբենին մէջ կը պատասխանեն ω, υ, τ նշանաւորաց, և կը հետեւի թէ, ապա բ, գ, դ պիտի հնչուին ըստ ձայնի β, γ, δ գիրերուն որոց կը պատասխանեն նոքա: Բայց գիտելի է զի Մետրոպ հայերէն գիրերը դըրաւ յունարէններուն դէմ ոչ ըստ հնչման, այլ ըստ քերականական զօրութեան նոցա: Չայս կ'ակնարկէ Կորնել երբ, հայերէն այբուբենի գիրերուն կարգաւորութեան վրայ խօսելով, կ'ըսէ. « Իջանէր (Մետրոպ, յետ գտանելոյ զնշանագիրս հայերէն լեզուին) ի քաղաքին Սամոստացոց, . . . եւ անդէն ի նմին քաղաքի գրիչ (քերական) ոմն հելլենական դպրութեան՝ Հոսիանոս գտեալ, զամենայն ընարութիւնս նշանագրոյն, զնրբագոյնան, զկարճն և զերկայնն, զառանձինն և զկրկնաւորն միանգամայն յօրինեալ և յանկուցեալ, ի թարգմանութիւն դաւնային: » Մետրոպ ոչ թէ հնչում տուաւ ազգին, այլ ուղղագրութիւն: Մետրոպ ցուցուց թէ բարբ գրուելու է բով, գով՝ գով: Իւրաքանչիւր գաւառացի ըստ իւր գաւառական հնչման կրնայ կարգաւ բարբը՝ փարք կամ պարք, գովը՝ քով կամ կով. կարգաւու ազատ է բայց ոչ գրելու:

Հնչման խնդիրը կը լուծուի, և կրնանք ըսել թէ կը դանուի հայերէն այն քանի մը գիրերուն բուն հնչումը, եթէ բ, գ, դ գիրերուն արուի այնպիսի հնչում որ յայտնապէս տարբերի փ, ք, ք գիրերուն հնչմանէն. ինչպէս է առ Յոյնս, առ որս β, γ, δ, ունին բոլորովին տարբեր ազգային հնչում: Թերեւս յատուկ հնչում մը ունէին ի սկզբան նաև մեր բ, գ, դ գիրերն, եւ այժմ կորսուած է այն հնչումը, կամ թեւեւս բ, գ, դ ունէին արեւմտեանց պ, կ, ս գիրերուն հնչումը, և այս վերջինք ունէին յատուկ հնչում: Զիարդ և իցէ, հայերէն տառերուն հնչման խնդիրը կատարելապէս լուծել առ այժմ կը թուի անհնար: Բնական է որ արեւելեանն և արեւմտեան, իւրաքանչիւր իւր հնչման ընծայէ առաջնու-

Թիւնը կամ հարադասութիւնը . բայց խնդրոյն վերջին լուծումը չէ այս : Հնչման ան միաբանութիւնը չիլնասեր լեզուին հոսթեան , ցորչափ ուղղագրութեան մասին կատարեալ համաձայնութիւն կայ :

Վիճման նիւթ եղած է նաև ղ գիրը : Ոմանք խիստ և խժական համարելով ղ հընչումը՝ կը պնդեն թէ ուրոյն ղ նշանագիր չկար մեր այրուբենին մէջ , այլ յ գիրն էր որ ունէր կրկին հնչում , մի՛ կակուղ , ըստ հնչման Յունաց լին , և միւս ևս թանձր : Կակուղ լը որոշելու համար թանձրէն նախնիք , կ'ըսեն , կը դնէին կակղին վրայ փշիկ , որ յետ ժամանակայ իյնալով միացաւ լին հետ որ առաւ ձև յի : Կամայա կան մեկնութիւն : Հայերէն այրուբենն ունէր , ունեցաւ և ունի յն իբրև ուրոյն գիր թէ՛ բնութեամբ և թէ՛ ձևով , տարբեր ի լէ , այսինքն իբրև հայ գիր որ կը պատասխանէ Յունաց լին , և հնչուած է միշտ , այնպէս , ինչպէս կը հնչեմք մենք այսօր յն աղօթք բառին մէջ : Եւրոպա շատ տեղ , մանաւանդ մայրաքաղաքներու մէջ , ՚՝ դըրոյն կը արուի ղ հնչումը , և չհամարուիր խժական :

Թէ ղ գիրը բոլորովին տարբեր է բնութեամբ լէ առ այս ունինք ներքին քերականական պատճառ : Ղ է բնութեամբ նայ , բայց ոչ նոյնպէս լ : Հայերէն ընդհանուր օրէնք է որ կրկին բաղաձայնով վերջաւորեալ բառերուն վերջընթեր բաղաձայնը պարտի լինել կամ նայ գիր , այսինքն՝ ղ , մ , ր , կամ սուլիչ գիր , զ , ս , օ , և կամ խ գիրը : Զոր օրինակ , բանա , տենդ , պինդ , թուսմ , ամպ , կարգ , մերձ , զերծ , վերջ , փունջ , լուրջ , կիրճ , աղև , խեղճ կեղծ , թուղթ , ազդ , ազգ , զգեստ , նիստ , անդուստ , հաշա , ճիշդ , ախտ , ուխտ : Այս է ընդհանուր օրէնք . չկայ հայերէն կրկին բաղաձայնով վերջաւորեալ բառ , որ վերջիչեալ ղ , մ , ն , ր , զ , ս , օ , խ , գիրերէն զատ ուրիշ բաղաձայն ունենայ վերջընթեր : Արդ որովհետև ղ գիրը կը տեսնուի յաճախ վերջընթեր , իսկ յ ոչ երբէք , յայտնի է թէ ղ է նայ և իբրև այսպիսի կը պատասխանէ յունարէն չ նայ գրին , և է տարբեր լէ : Ղ գիրը լ ի հետ նոյն կարծեցունելու համար Ղ ին ձևը փշիկի մը անձման ընծայել արգարև անտեղի է , ևս առաւել անտեղի ղ հնչման , իբրև խժական ձայնի , խժոռ հայել :

Ա. Մ. ԳԱՐԱԴԱՇԵԱՆ

Փ Ի Լ Ի Ս Ո Փ Ա Յ Ո Ի Թ Ի Ի Ն

ՀՈԴԵԲԱՆՈՒԹԻՒՆ (1)

(Պէրպլեբան վարժարանի մէջ աւանդեալ դասուց ամփոփումն) :

Գ Ա Ս Զ .

ԴԱՏՈՂՈՒԹԻՒՆ ԵՒ ԻՄԱՍՏԱՍԵՐՈՒԹԻՒՆ

31. Ի՞նչ է դատողութիւնը . — Դատողութեան վերլուծութիւնը . — Դատողութիւնն է , ըստ Արիստոտելի , գործողութիւն որով կը հաստատուի ինչ զիմեք : Դատողութիւններ կ'ընենք , երբ ըսեմք . « Երկիրը կլոր է » , « Ձիւնը ձերմակ է » , Մարմինք տարածութիւն ունին » , « Ամէն իրողութիւն պատճառ մ'ունի » , « Մերոպ հայ տառերը դատու » ևն : Այս ամէն խօսքերուն մէջ բան մը (հանգամանք մը , ըլլալու եղանակ մը) կը հաստատենք բանի մը վրայ . կըրոթեան հանգամանքը երկրին , ձերմակութեան հանգամանքը՝ ձեան , տարածեալ լինելու հանգամանքը՝ ամէն մարմնոց , պատճառաւոր լինելու հանգամանքն՝ ամէն իրողութեանց , և հայ տառից գաիչն լինելու հանգամանքը Մերոպոյ վրայ կը հաստատենք : Որպէս կը տեսնուի , ամէն դատողութեան մէջ երեք տարերք կան . 1⁰ Առարկային դադարարն , զորմէ բան մը կը հաստատենք : 2⁰ Գաղափարն այն բանին զոր կը հաստատենք այդ առարկային վրայ , կամ նորա գոյութիւնն և կամ այս կամ այն նորա յատկութիւններէն , լինելոյ եղանակներէն , և 3⁰ Երկոյուն միաւորութիւնը մըտաց մէջ : Գիտեմք որ մտաց մէջ կատարուած դատողութիւնն , խօսքով արտայայտեալ , կը կոչուի նախադասութիւն , և որպէս դատողութիւնն ունի երեք տարբեր , այսպէս և ամէն նախադասութիւն կը պարունակէ յայտնի կամ լռելեայն , որոշ կամ միայեալ , երեք եզրեր , սրք կը պատասխանեն դատողութեան երեք տարերց . ենթակայ (sujet) , որ ցոյց կուտայ դատողութեան առարկայն , Ստորգլխի որ կը յայտնէ այն գաղափարն զոր կը հաստատենք առարկային վրայ , և Էական բայ կամ պարգաղէս (բուն) բայ որ ենթակային ու ստո-

(1) Տես թիւ 4—14

րողելոյն կապակցութիւնը կը բացատրէ :
 Տրամաբանական վերլուծութիւնը ամէն խօսք , ամէն ճառ կը վերածէ նախադասութեանց . նախադասութիւնն խօսքին հիմնական տարրն է . և այս այսպէս է , վասն զի դատողութիւնն մտածման հիմնական գործողութիւնն է , և լեզուն լինելով մտածութեան բացատրութիւնն՝ պարտէր ի հարկէ պատկերացնել յինքեան մտաց գործելոյ եղանակն : Արդարև ամէն մտաւոր գործողութիւն կ'ենթադրէ դատաստան , դատողութիւն . թէ երբ ըմբռնումներ ընեմք , թէ երբ բաղդատեմք , վերացնեմք , հանրացնեմք , թէ երբ յիշեմք , երևակայեմք , կը դատեմք , դատողութիւններ կ'ընեմք : վասն զի ի՛նչ է դատել , եթէ ոչ հաստատել : Զոր օրինակ երբ ձեռքս գրքիս վրայ դնելով՝ մտքիս մը գոյութիւնը կ'ըմբռնեմ , ի՛նչ կ'ընեմ մտացս մէջ . կը հաստատեմ թէ բան մը կայ , բան մը կայ որ չէ իմ եսն . երբ ձեռքս շոշափելով նորա այլ և այլ կողմերն՝ կ'ըմբռնեմ նորա ձեւը և տարածութիւնը , ի՛նչ կ'ընեմ . դարձեալ կը հաստատեմ թէ այդ մարմին է այս ինչ , ձեռով և այս ինչ տարածութեամբ : երբ գաղափար մը կը հանրացնեմ , կը հաստատեմ թէ այս ինչ գաղափարը կը տարածուի այս ինչ թուով անհատ իրաց վրայ ու կը պարունակէ այս ինչ յատկութիւնները : Այսպէս և մտաւոր այլ գործողութեանց համար , որք միշտ դատողութիւն մը , հաստատութիւն մը կը թաղուցանեն իրենց մէջ : Չկրնար միտքն իրողութիւն մ'ընդունիլ առանց անոր հաւատալու , և հաւատալ , հաստատել , դատել մի և նոյն բանն են : Ուստի և ամէն դատողութիւն է էապէս հաստատութիւն (affirmation) . ժխտելն ալ հաստատել է անուղղակի կերպիւ , այսինքն հաստատել թէ հակառակին կը հաւատայ միտքը . «քարը բոյս չէ» ըսել է ըսել թէ «Քարը է ոչ-բոյս» : Նոյնպէս և տարակուսական , թէական , ենթադրական նախադասութեանց մէջ միտքը դարձեալ կը հաստատէ , միայն ժխտում խառնելով հաստատութեանց հետ , կամ միևնոյն ատեն մէկէ աւելի առժամեայ հաստատութիւններ ընելով , զայնս ստուգելու և ի նոցանէ ընտրութիւն ընելու վերապահմամբ :

32 . Դատողութիւն և գաղափար : — Դա-

տողութիւնն է գաղափարներ միմեանց մերձեցնել վճռելու համար թէ միմեանց կը պատշաճին կամ ոչ , միմեանց մէջ կը պարունակուին կամ ոչ : Ըստ այսմ պէտք է որ միտքը կանխաւ ունենայ առանձին գաղափարներն որոց մէջ դատողութեամբ պատշաճութիւն կամ անպատշաճութիւն պիտի տեսնէ և առ այս բաղդատէ զայնս յառաջագոյն . բայց , ըստ նախորդ բացատրութեան , նոյն իսկ այն մտաւոր գործողութիւնք յորոց կը ծագին գաղափարք՝ կ'ենթադրեն դատողութիւն . ապա դատողութիւն յառաջ է թէ յետոյ քան զգաղափար : Այս խնդիր տեղի առաւ Վիկտոր Գուզէնի նշանաւոր մէկ քննադատութեանն ընդդէմ տեսութեան Լոքի որ զլատողութիւնն կը կայացնէր միայն կանխաւ ստացուած և ի ձեռն բաղդատութեան իրարու մերձեցեալ երկու ուրոյն գաղափարաց մէջսեղ պատշաճութեան կամ անպատշաճութեան աննշուրթիւն մը հաստատելու մէջ : Վ . Գուզէն ցոյց առաւ թէ երկու կարգի դատողութիւններ կան . սմանք , զորս մարթ է կոչել յալգասականք (jug:s comparatifs) ապաքէն արդիւնք են բաղդատութեան մը զորս միտքն ի դործ դրած է յառաջագոյն ստացեալ գաղափարաց , յղացմանց մէջսեղ . իսկ այլք զորս պէտք է կոչել անմիջականք կամ դէմ յանմիջականք (jug:s immediats ou intuitifs) , չեն յառաջագոյն քան քան զստացումն դատողութեան երկու եզրերը կազմող գաղափարաց , այլ ի նոսա դատողութիւն և գաղափարք ժամանակակից են , միտքն ենթակայ և ստորագելի միանգամայն ի միտքին ըմբռնած է անբաժանարար , անմիջական տեսութեամբ : Այսպէս է , օրինակի համար , սա դատողութիւն «կամ» , այսինքն «Գոյ եմ ես» . կարելի չէ մտածել թէ միտքը նախ առանձինն ըմբռնած է եսին գաղափարն և առանձինն գոյութեան գաղափարն , և յետոյ զայնս իրարու մերձեցնելով համեմատելով՝ նշմարած ու հաստատած է անոնց պատշաճութիւնը . կարելի չէ անձին , եսին գաղափարն գոյութենէն զատ ըմբռնել ի սկզբան և ո՛չ ալ գոյութիւնն առանց գոյ եղող բանի մը և նախ և յառաջ մեր անձին : Միշտ թանձրացեալին ծանօթութիւնն կանխագոյն է քան վերացութեանցն , և զամէն յատկութիւն որոց գոյութիւնը կը

հաստատեմ առաջին անգամ՝ կը տեսնեմ կապուած մի ենթակայի, անոր հետ զայն կ'ըմբռնեմ, ի նոս զայն կը ճանչեմ: Բայց տակաւ վերացումը կ'անջատէ անանջատ ըմբռնուածներն, հանրացումն կ'ընդհանրացնէ զանոնք, կը լիութէ ընդհանուր գաղափարներու, և յայնժամ կ'սկսիմք բաղդատել զանոնք իրերաց մէջ, միմեանց վերայ կ'ստորագեմք կամ կը ժխտեմք, անոնց կը վերածեմք մեր ըմբռնմանց առարկայներն, միոյն տակ ստորագտակելով, միւսէն դուրս հանելով, և այսպէս կը ճշգեմք, կ'որոշեմք գաղափարը, էակը կամ երեւոյթը, տեղ մը կուտամք անոնց դասի մը մէջ, կամ դուրս կը հանեմք դասէ մը, որով կ'որոշեմք անոնց բնութիւնը, զի դասի մը մէջ դնելով կ'ընծայեմք իրենց նոյն դասին յատկութիւններն ու դասէն դուրս հանելով գէթ կը հաստատեմք թէ չունին նոյնին հանգամանքներն: Ահա՛ այն ատեն մտքը կը կազմէ բաղդատական դատողութիւններ: Անգամ մ'որ ի միասին ըմբռնած է «կը խորհիմ» անմիջական դատողութեամբ եսն ու խորհուրդը, զի նախ անհրնար էր ուրոյն ըմբռնել այս երկու գաղափարներ, կ'անջատէ կը վերացնէ յետոյ խորհուրդը և կը հարցնէ թէ կենդանին, տունը կը խորհի՞ն թէ ոչ, թէ խորհուրդի գաղափարը և կենդանոյ կամ տունիկի գաղափարը հա՞շտ են միմեանց հետ թէ անհաշտ: Ապա ուրեմն մտքը նախ, ուրիշ բառով, ինքնաբեր (spontané) դատողութիւններ կ'ընէ, յորոց կը հանէ, ի ձեռն վերլուծութեան, վերացման և հանրացման, գաղափարներ որք յետոյ կը ծառայեն իրեն կազմելու խորհրդածեալ (réfléchi) դատողութիւններ ի ձեռն բաղդատութեան: Ուրեմն և վերացում և Հանրացում, բաղդատակելով մեր գաղափարներն, կը բաղդատակեն նաև մեր դատողութիւններն:

(Շարունակելի)

Ռ. Յ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

Զ Ա Ն Ա Զ Ա Ն Ք

ՏԻԵԶԵՐՈՒԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ
Մ Ա Ն Կ Ա Վ Ա Ր Ժ Ո Ւ Թ Ե Ա Ն

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԺՈՂՈՎՐԴՈՅ ՈՐՔ ԿԱՆ
ԱՐՏԱՔՈՅ ԱԶԴԵՅՈՒԹԵԱՆ ՅԱՅՏՆԵԱԼ ԿՐՕՆԻՑ
Բ. ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԱՌ ԺՆՆՍ

Ճենաց ազգն պահպանողական է քան ամէն ազգերն: Եւ ոչ մէկ ազգ այնչափ հաստատուն և կայուն կը պահէ բաւական յառաջադէմ քաղաքակրթութիւն մը: Այս կայուն և մնացական բնութիւնը որ կ'որոշէ զձենս յայլ ազգաց, հետևութիւնն է այն կրօնական սկզբան որ կը տիրէ այս լայնածաւալ միապետութեան մէջ:

Ճենացին չունի և ոչ մի ծանօթութիւն զԱստուծոյ: Ասուած բառը չունի իւր լեզուին մէջ: Նա գիտէ միայն թէ կայ տիեզերական զօրութիւն մը, երկինք, որ կը տիրէ բովանդակ բնութեան վրայ: Ինքնակալն, ուստր այս զօրութեան կամ երկինց, ունի հազարգութիւն երկինց հետ: Այսու հոգեկան իշխանութիւն մը կը միացնէ աշխարհային իշխանութեանը հետ: Իւր հըրամանները են երկնային պատուէրներ զորս ոչ ոք ի մահկանացուաց կը յանդգնի առնուլ ի քնին և հակառակ կալ նոցա: Ի վայր քան զինքն են Մահաւարիմ և զանազան աստիճանք պաշտօնէից, որք իւր ներկայացուցիչներն են և առ որս արժան է մատուցանել նոյն մեծարանքը, նոյն յարգանքը և նոյն պաշտօնը: Ընտանեաց հայրն վերջին սահմանակէտն է այս նուիրապետութեան և ներկայացուցիչն ինքնակալին իւր տան մէջ: Ճենաստան այսպէս մեծ ընտանիք մ'է, յորում ինքնակալն, հասարակաց պաշտօնեայք, ծնողք և հաւն ու հանին նուիրական անձինք են և արժանի մեծագոյն պաշտաման: Բնականաբար դաստիարակութիւնը կազապարուած է ձենաց այս կրօնքին վրայ, ինչպէս պիտի տեսնեմք հետևեալ սկզբանց մէջ:

«Եթէ տան իրերն են բարեկարգ, Տէրու-
(1) Տես թիւ 7.

Թեան իրերն ալ պիտի ըլլան բարեկարգ , զի սոքա կը հանգչին նոցա վրայ : Նա որ կը պատուէ իւր ծնողքը պիտի պատուէ նաև թագաւորը , և թագաւորը յայնժամ կրնայ իւր որդիներն համարել իւր հպատակները :

«Ոչ մէկ վիճակ , ոչ մէկ ատրիճան ու պատիւ կրնայ ազատ կացուցանել զորդին յորդիական մեծարանաց : Որդիական հրնազանդութիւնը կը բարձրանայ մինչև յերկինս , որոյ կանոնաւոր շարժման կ'ըլլայ նմանող . որդիական հնազանդութիւնը կ'ընդգրկէ զերկիր լրիւ իւրով և է պատկեր արգասաւորութեան նորա :

«Հօր իշխանութիւնը անսահման է . հնազանդութիւնն որդուց է անչափ եւ անանց սահմանի : Մանտարիներ ստիպուած է պատժել այն որդին որոյ հայրը կը գանգատի , և այս՝ առանց քննելու հօր 'փաստերը , որովհետև այն որդին որոյ՝ հայրն է գժգոհ , արժանի է պատժոց և պատուհասից :

«Ծնողք կը սնուցանեն և կը կրթեն իրենց որդիքը մինչև որ նոքա հասնին ի կատարեալ չափ հասակի : Հօր մը և մօր մը իշխանութիւնը արդարև շատ անսահման է , է նա հանգոյն բարձրաբերձ բարձանց երկնից : »

Որդեսպան հայրը (Որդեսպանութիւնը սովորական բան մ'է ի ծենաստան) չէ պատժելի . բայց երբ որդի մը թշնամանէ իւր ծնողքը , զայն ի մահ կը դատապարտեն : Գաւառը կ'ամբոխի ու կը խուովի . նողկալի ոճիր մ'է գործուած . ինքնակալը կը նստի իւր գահոյից վրայ առ ի դատել : Երջակայ վայրերուն բոլոր Մանտարիներն կ'իյնան յիշխանութենէ . որովհետև երկրի մը վարչութիւնը՝ ուր կը կատարուի այն գունակ ոճիր մը , պարտի լինել յոսի և վատթոր : Յանցաւորը յօշ յօշ կը պատառեն , նորա տունը և մերձակայ տուները կ'այրեն եւ հիմնայատակ կ'ընեն :

Որդուց այս պարտիք առ ծնողս իւրեանց են հիմունք այն բոլոր պարտուց որք կան ընդ իշխանս և ընդ հպատակս , ընդ տեարըս և ընդ ծառայս , ընդ դատարարակս և ընդ աշակերտս : Ահա ինչ ինչ հետաքրքրական պատուէրներ նաև , դատարարակաց և աշակերտաց յարաբերութեանց նկատմամբ :

«Հարկ է պատուել իւր բովանդակ կե-

նաց մէջ իբր հայր իւր ուսուցիչը : Երբ աշակետ մը ուղեկից է իւր ուսուցչին , չը պարտի թողուլ զայն խօսելու համար ուրիշ անձի մը հետ . չպարտի նաև քայլել նորա հետոցը վրայ , այլ սակաւ ինչ յաջ կուսէ երթալ : Երբ իւր ուսուցիչը յենու իւր ուսոց վրայ ականջին բան մը ըսելու համար , պարտի աշակերտն իւր ձեռքը դնել բերանոյն վրայ , որպէս զի իւր շնչովն անհանգիստ չընէ իւր ուսուցիչը . երբեք չպարտի ընդմիջել նորա խօսքը երբ կը խօսի նա : »

Իրաց այս վիճակին մէջ և այն գունակ օրինաց ազդեցութեան տակ , յայտնի է որ ծենաստան պարտի մնալ անշարժ և ի տեղակալ իւր զարգացման մէջ : Հանգոյն իւր օրինաց , իւր ընկերային կարգերն և իւր գրականութիւնը նուիրական են , և յուէտ կան և մնան ի նոյնութեան և մեծարեալ : Ծենացին չուսանիր լինել ի խոյզ և ի խընդիր ճշմարտութեան , զխտութեան զանազան ճիւղերու մէջ , այլ պարզ ծանօթութիւն մը կ'ստանայ ծխից , օրինաց , սկզբանց և իրողութեանց վրայ որք կը գրտնուին իւր գրականութեան մէջ : Ծենական ուսմունք կը նմանին վաղեմի դպրոցակրանաց ուսմանց , յորում , Արիստոէլ ասացն կը փարտաէր ամէն տարակոյս : Բայց այս ուսմունք ոչ նուազ կարևոր են ամէն դասակարգի համար . որովհետև իւրաքանչիւր ծենացի պարտի կարող լինել հասկնալու իւր ինքնակալին պատուէրները : Ուստի ծենաստան է երկիր դպրոցաց և քննութեանց : Ուսմամբ միայն կարելի է անդ բարձրանալ վարչական նոյն իրապետութեան մէջ :

Ծենաստանի մէջ ուսմունք չորս գլխաւոր աստիճաններու կը բաժնուին : Յառաջնումն (նախնական կրթութիւն) , կ'ուսանին կարգալ , քրեալ , և կ'ուսանին ի բերան պատուէրներ , վճիռներ ևն : Այս կրթութիւնը իսկապէս յիշողութեան վրայ հաստատուած է : Յերկրորդումն , կը մեկնեն հատուածներ , վիպութիւններ , պատուէրներ ևն , զորս ուսած են արդէն նախնական կրթութեան մէջ : Յերրորդումն , կ'ուսանին տաղաչափութիւն և ոճոյ ձևերն : Ի չորրորդումն , բանախօսութիւն եւ ճառ կը յօրինեն բանաստեղծական նիւթոց վրայ . ամենքն ալ ըստ նախագրեալ ուղղութեան :

Ոճոյ հրահանգաց մէջ, զոր օրինակ, նախ պարտ է ուսանել բաժանել իւր նիւթը. յետոյ ընդլայնել գլխաւոր գաղափարները, վերլուծելով և դասաւորելով միշտ մտածութիւնները մինչև իւրեանց մտնրամանր բաժանումները: Յետոյ վերլուծեալ գաղափարները կ'ամփոփեն ի մի ամբողջութիւն կազմակերպեալ: Հետտրութիւնը կամ ոճոյ ձևերուն ուսումն ալ ունի իւր հաստատուն կանոններն: Ընթերցումը և գրավարժութիւնը չորս աստիճաններու մէջ ալ կը բունակեն: Ընթերցումը, գրավարժութիւնը և գաղափարները սերտիւ միացած են իրարու հետ: Ճենացիք չունին գիր բառեր գրելու համար. Իւրաքանչիւր գաղափար ներկայացուած է մասնաւոր նշանով մը եւ ձևով մը: Ուրեմն իւրաքանչիւր առարկայի և անձնիւր գաղափարի համար պէտք է գրեալ նշան մը եւ խօսեալ բառ մը: Այս միջոցաւ դէմ յանդիման կրթութիւնը կամ գաղափարաց ուսումը սերտիւ կապուած է ի ձենատան ընթերցման և գրավարժութեան հետ: Նախնական վարժարանին մէջ, պէտք է օրը չորս նշանագիր ուսանել: Այն ձենացին որ գիտէ ութսուն հոգար բառ եւ այնչափ նշան զանոնք ներկայացնելու համար, որ ունի, հետևաբար, ութսուն հոգար ծանօթութիւն կամ գաղափար, համարուած է այր գիտուն և ներհուն:

Քաղաքաց լեզուի մէջ, ատրութիւնը կը հոգայ հասարակաց դպրոցներուն ծախքը: Կրթութիւնը կ'սկսի հինգ տարեկանէն և կը տևէ մինչև երկստասան կամ չորեքստասան ամ հասակի անընդհատ, այսինքն առանց արձակուրդի: Մանկունք պարտին կանուխ, ընդ արեւածայրս, երթալ ի դըսրոց, և ի մտանելն, ողջունել զՎոնփիւրկիոս, զիմաստնագոյնն ի ձենաց, և զիշխանապետըն: Յերեկոյին նոյն կերպով կը մեկնին դպրոցէն: Երբ աշակերտք բազմութիւն են, դաստիարակը նախ կրտսերագոյները կ'արձակէ, յետոյ զանոնք որք աւելի երկար ճամբայ ունին տուն դառնալու համար: Մանուկը չհամարձակիր ճամբուն մէջ ոչ զբօսնելու և ոչ խաղալու, և, երբ մշտնէ ի տուն, պարտի ողջունել առտնին աստուածները, հաւն ու հանին և ծնողքը. յետոյ բարձրաձայն կը կարգայ իւր դասերը: Իւրեան պատուիրուած է արդէն իւր գիրքը աչերէն երեք մատնաչափ հեւի

բանել կարգալու համար, չաղտոտել մտները գրելու ժամանակ, և շիտակ կենալ:

Դպրոցին մէջ, առաջին կրթութիւնը կը սկսի քաղաքավարական ինչ ինչ ձևեր և արարողութիւններ ուսանելով: Մանուկը կ'ուսանի ընթերցման և գրավարժութեան տարերքն, իւր աչաց առջև ունենալով այն առարկաներն որոց նշանները կ'ուսանի (դէմ յանդիման դաս) յիշողութեան հրահանգաց մէջ. մանուկը կ'ուսանի հին վրձիւներ և բարի վարուց կանոններ: Ահա քանի մը օրինակ այս ձենական իմաստութենէն:

«Հագիւ մտուկն կ'սկսի ընթանալ ընդոս. արդէն իսկ նանապարհն կարի անձուկ է իւրեան համար:

«Չարն ուսանելի է փութով եւ արագ, բարին դժուարին:

«Իմաստնոց համար է բանն, եւ օրէնք նոցա համար որք չեն քափուր յիմաստութենէ:

«Նա որ կրնայ ժոյժ ունել մեծագոյն աղեփից, արժաւորագոյնն է հրամայելու համար այրոց:

«Խօսակցութիւն մը իմաստուն մարդոյ մը հետ առաւել կ'արժէ քան քսոսն ամ ուսմանց:

«Նա որ չսերմաներ, չունի հասկ հնձելու, եւ նա որ չհնձեր, չունի հաց ուտելու:

«Գուն գործէ լինել փայլուն յարսախոս եւ ամբիժ ի ներխոս:

«Լինելու համար տէր երկրի, պարս է միացրնել ներքինը արսաքին փայլին հետ:

«Թէ դու ինքնին սանձ չդնես լեզուիդ, ոչ ոք պիտի սանձէ զայն:»

Թուարանութիւնը նախնական դպրոցին մէջ կ'ուսուցուի, բայց երգն արգիլուած է: Ձենացի մանուկը չհամարձակիր ոչ երգելու, ոչ զբօսուցիչ գիրք կարգալու և ոչ խաղալու: Արգիլուած է նաև նմա վագել և ցատկել հասարակաց ճանապարհներու վրայ: Պարտի կազուութիւն իւր միտքը ձեռագործ աշխատութեամբ կամ մարմնական մարզանօք: Դպրոցին մէջ, ծոյլ աշակերտը կը պաւկեցնեն նեղ նստարանի մը վրայ և կը ձեծեն գաւազանի հարուածներով: Ամէն ամիս կամ ի լրանալ հնգետասան աւուր, ընտանեաց հայրերն քննութիւն մը կը կատարեն: Տէրութեան ըրած քննութիւնք դունփակ կը կատարուին, և, ըստ արդեանց, ընտրեալն կ'ստանայ իւր կարկարքը, իւր առանձին զգեստը և իւր աս-

տիճանին նշանները :

Ազլիանց դաստիարակութիւնը թողլիք եղած է ի ձեռնաստան : Սիօ-Հաօ , կամ Դպրոց մանկանց կոչուած գիրքը հետեւեալ կանոնը կուտայ ազլիանց դաստիարակութեան համար . « Ազլիկներն , ի տասնամեայ տիոց , չպարտին տունէն դուրս ելնել : Նոքա պարտին իննել քաղցրահամբոյր , խօսիլ շնորհօք . և վայելչութեամբ , աշխատիլ մետաքսագործութեան , և ասեղնագործել : Ի քսանամենի , պարտ է ամուսնացնել զանոնք » :

ԺԻՒՒ ԲԱՐՕՁ

Թարգ .

Մ . ԱՍՔԱՆԱՋ

— 234 —

Բ Ա Ռ Ա Ք Ն Ն Ա Կ Ա Ն

ՈՒՂՂՈՒԹԻՒՆՔ ՆՇԱՆԱԿՈՒԹԵԱՆ

ԲԱՆԻ ՄԸ ՀԱՅՏՐԵՆ ԲԱՌԵՐՈՒ

1. Աղբղբուկ : Ատեփանոս Կամենիցացի կը գրէ . « Աղբղբուկ , բլի , կաւ . խոտ անուշահոտ պարտիզաց , որ և վայրի նարգոս ասի . լատ . Phu' Valeriana . Գաղ . բժ . » — Նոր Հայկագեանն . « Աղբղբուկ կամ Աղբաղբուկ . բառ անյայտ առ Գաղիանոսի , իբր աղտ պղնձոյ և այլոց իրաց . դիքս , sorpու , ֆիւսիէ , որպէս և Աղբղբուկի հունց , իբր անուկ խոտոյ » : — Հ . Մանուէլ Զախճախեան . « Աղբղբուկ կամ Աղբաղբուկ . ըստ ոմանց խոտ ինչ անուշահոտ . իտ . Valeriana , Fu . (Երկրայօրէն) եւս՝ կղկղանք պղնձոյ և այլոց հրահալից . իտ . Scorita di rame , feccia de' metalli » : Նոյն Զախճախեանն իւր Իտալերէն-Հայերէն ընդարձակ բառարանին մէջ (Վենետիկ , 1804) կը գրէ . « Fu , Valeriana . խոտ ինչ . ըստ ոմանց կոչի Աղբղբուկ » : — Առձեռն բառարանի երկրորդ տպագրութիւնն . « Աղբղբուկ . 1 . հանքերու աղտ , դիրտ . sorpու , ֆիւսիէ . 2 . բժշկական արմատ մը՝ ծաղիկն անուշահոտ , ֆէսի օրու » : — Իսկ Վրուրի Որմզգանայ Բուրաստանաց մէջ , Ա . տող 27 , Աղբղբուկ գործածուած է իբրեւ հաւու ծիրտ . « Դու զքամածոյ չանչն ի յանկեան ուրեք մըթերըս բացօթեազ , ըսան ի խուան ընդ աղբղբուկըս վառեկի գէ'զ առ ի փուտ » :

Ըստ իս՝ կը սխալին Աղբղբուկ բառը աղտ կամ ծիրտ հասկըցողները . Աղբղբուկ բուսոյ

մ'անուն է , և ոչ այլ ինչ : Գաղիանոսի բառերուն մէջ գրուածն այս է . « Եւխաբու . Աղբղբուկ » . նոյն տեղը կը գրուի գարձեալ . « Ալ շիոյ . Աղբղբուկի հունգ . ապամ կոմաճի » : Եւխաբու ձայնին մօտ կայ յունարէն իվի'սֆուս , լատ . Hibiscum , որ է գղ . Guimauve , հայերէն Տուղտ , տձ . կիւլ խաբէմ : Կայ նաև հայերէն Բաղբաբ կամ Բաղբակ տունկ , որ ձայնիւ նման է Աղբղբուկ բառի : Նոր Հայկագեանն ի բառն Տուղտ կը յիշէ վիայութիւն մը ի բժշկարանէ , յորում կ'ըսուի : « Բաղբակ . տուղտ . հաթմի » : Այո հարմի բառս է արարերէն խաբմի , այսինքն տձ . կիւլխաբէմ :

2 . Ամար . Ստեփանոս Կամենիցացի կը գրէ . « Ամար . հաւ ջրային գորշագոյն , սակաւ ինչ մեծագոյն քան զաղաւնին . լատ . Fulica , Larus . Մագ . Բեր . « Որպէս ոչ եղելոյ լուղակաց , զամար հաւն կոչեն տմառ » : — Նոր Հայկագեանն . « Ամար . անյայտ բառ , զոր ընթեանու ի Մագիստրոսի Քերականին Ստեփանոս Լեհացի (1) և մեկնէ , հաւ ջրային գորշագոյն փոքր ինչ մեծ քան զաղաւնին . (որպէս ձայ ծովու . մարքի) այլ ինքն դնէ ի լատ . Fulica , Larus . որոց առաջինն կոչի յոմանց ոմկ . կերկեր , ըստ Մենինսքեայ՝ իննիք » : — Հ . Ման . Զախճախեան . « Ամար . հաւ ջրային գորշագոյն՝ փոքր ինչ մեծ քան զաղաւնին . իտ . Folaga » : — Առձեռն Բառարանն՝ երկրայանօք . « Ամար . տեսակ մը հաւ կամ ջրային թռչուն մը » :

Ըստ իս՝ Ամար ոչ է հաւ ջրային կամ թռչուն , այլ տեսակ մը ձուկ : Ստեփանոսի Կամենիցացեոյ ի Մագիստրոսի . Քերականէն յիշած վիայութիւնը այսպէս կը գրուի ի ստոյգ օրինակս Մագիստրոսի . « Ոչ ունելով նոցա (Յունաց) նէ՝ յորջորջեն զձուռակն ծուռակ , որպէս ոչ եղելոյ լողականացն որ ի մերում գաւառիս , նովին ձայնիւն կոչեն զաւմարն՝ տմառ » : Հոս հաւ բառի յիշատակութիւն չըլլուի , և խօսքը պարզապէս լողականաց՝ այսինքն ձկանց՝ վրայ է . « Յոյնք նէ գիրը չունենալով , կ'ըսէ Մագիստրոս , փոխանակ ձուռակի կը հնչեն ծուռակ . նոյնպէս մեր երկրին մէջ գտնուած ձկները իրենք չունենալնու համար , նոյն բառով ամառ կը կոչեն (ուայով) ամար ձուկը (որ հայերէն բէով կ'արտասանի) » :

(1) Այն ինքն է Ստեփանոս Կամենիցացի :

Մինչեւ հիմա Սեանայ լճին մէջ կը գտնուի Ամառն անունով ձուկ մը . տես Հ. Ղեւոնդ Ալիշան, Տեղագիր Հայոց մեծաց, էջ 19:

3. Ամբեւ: Նոր Հայկազեանն կը գրէ. « Բառ անտոյգ . զի կամ է յն. է'միւրիօն , որ է Սաղմն , և կամ թերևս Խլուրդ . Որ յորովայնի մեռանի , ընդ այն համարէ' թէ զամբեւսն ոք սպանանից . քանզի ամբեւսն կոյր է , և ոչ գիտէ որպէս սպանանի » . ԿիւրեղԱլեքսանդրացի, Մեկն . Բ. Օրինաց » : — Հ. Ման, Ջախջախեան չի յիշեր զԱմբեւս , այլ կը դնէ երկբայանօք . « Ամբոյս . յովազ կամ միեղջերու . իտ . Pantera. Liocorno' » . — Առձեռն Բառարանն կը գրէ նոյնպէս երկբայանօք . « Ամբեւս . սաղմ կամ խլուրդ » . « Ամբոյք կամ Ամբոյս . յովազ կամ միեղջերու կենդանին » :

Ըստ իս' Ամբեւս կը նշանակէ խլուրդ , գլ. Taupe, տձ . Եէր սրչանք : Նոր Հայկազեանն միայն Կիւրղի Ալեքսանդրացւոյ Բ. Օրինաց մեկնութենէն վիայութիւն մէջ կը բերէ . բայց ես գտած եմ այս բառս նա և Գաղիանոսի բառերուն մէջ, յորս կը գրուի . « Աստիաղկէ . Ամբոյս » . Աստիաղկէ է յոյն բառն ասփալաֆս , այսինքն խլուրդ : Մինչեւ հիմա Խոտրջրեցիք Ամպուս կ'ըսեն խլուրդին : Իսկ Ամբոյս յովազի կամ միեղջերւոյ նշանակութեամբ անծանօթ է ինձ :

(Շարունակելի)

ՆՈՐԱՅՐ ԲԻԻԶԱՆԴԱՅԻ



ԲԱՆԱՍՏԵՂՄԱԿԱՆ



ՀԵՐԱՎԼԵԱՅ ՄԱՆԿՈՒԹԻՒՆ

Հայկ , համակ ի բեւեռին ծածկեալ ի ձիւն , Առ հըրափայլ Շամբն ըզրիրտ ուսս իւր ցուցանէր .

Ստուեր լըռին տարածանէր անդ ի բացեայ : Ալկմենայ լուացեալ զորդիս իւր և կաթամբ Յղիացուցեալ՝ առ երի հանգոյց միմեանց ի գոգաւոր բարձրածընօտ ինչ վահանի , եւ ժպտելով՝ ասաց — Սիրունք իմ , նիրհեցէք .

Առուգադեղ որդեա'կըք իմ , օ'ն նիրհեցէք . Բարեացակամ Գիշեր և ժամք աստուածեղէնք

Մանուկ հոգւոյ ձերոց երազ տացեն օսկի :—

Ասաց , թեթե գգուեաց ձեռամբ զերկոսին Իպըլընձեայ յանկողնի անդ գիրկընդ խառն , եւ ճօճեցոյց՝ ըզգալար դէմն համուերելով եւ մաղթելով զնալ ի նոցունց չարին ի բաց : Նինջ քաղցր յայնժամ յարուանուեսս հըպեալ նոցին

Օրրեաց զնոսս յանմեզ հանգիստ հեշտական : Աստղապըսակ Գիշեր՝ ի կէս արշաւանին՝

Ի մըթագոյն վարէր ըզՍայն յարեմուտս : Հըսէր բընաւն , անտառք , լերինք և քաղաքիկեար ,

Չըւառին ճիչք և արքայից լուէին զմաղք : Ննջէին Գիք յերազելով զօհից ձենձեր .

Այլ Հերա , միայն անքուն , բազմահընարն , Յարոյց կրկին թեփամորթ վիշապս , երկուս Օձս ահագինս , կապոյտ սողուն քընթընոցօք ,

Սատարս սխոյն , որոց էր պարտ հեղձուցանել Յորրանի իւրում զորդի թերացուհւոյն :

Անցին ըստ սեաման և ըստ կրկին սիւնըս դըրանց ,

Եւ զխաժագոյն աչիւունսն արկին յասպարին խոր :

Իփիկլէս զարթնու ընդօստ , և գազանաց , Շըչոլ լեզուին , և՛ ահեղ ժանեացն ի տեսիլ ,

Սրտապախ , ըզբողանի հարեալ , տըժգոյն , ի յեղակարծ սոսկմանըն ձիչ արձակէ սուր , Ի՛ ի մօտալուտ վտանգէն ի խոյս խաղայ թալթալ :

Այլ Հերակլէս յառնէ կանգնի յիւր խանձարուրս ,

Բուռն հարկանէ զօճիցն երկուց , ի մածուցիկ

Նոցին ի փող մըխէ զմատուենսն աստուածեղէնս ,

Եւ խաղալով՝ տայ իբր ըզհուր յակնակապձէն

Գնտիցն ի դուրս ցայտել պնդամորն լայնելոց :

Չօղըս ընդ վայր բաղխեն , մըսուտ , ուռուցիկ .

Հեղձամղձուկս ունի զնոսին մանուկն ի ձեռս ,

Եւ թօթաիէ՝ զըւարճացեալ ի տես նոցուն Գալարեւոյ շուրջ զասպարաւ լորձնալից :

Ապ'ընկեցեալ մեռեալս ի բաց յըսպիտակ կուձ՝

Չարիւնթաթաւ բազիկիսն ամէ զլանջօքն ի քուն :

Նիրհեա՛, դատի՛չդ հանդերձեալ, հին ե-
 դեռանց
 Սանձողդ, հըպարա ի յոյս վեհից քոց ա-
 բուժեանց .
 Դու զոր, վըսե՛մ խարոյկ, տեսցեն շոճք
 Իդայ
 Զի, հուրք կիզեալ մարմին և միտք ցաւօք
 սրբեալ,
 Ի բոցավառն ի գաղաթան՝ յաստուածանալ՝
 Թողցես զաճիւն քո և զմահակ և զմորթ
 Թարգմ . Նեմեան :

Ռ. Յ. ՊԵՐՊԵՐԵԱՆ ԼԵԴՈՆԻ ՏՐ. ԼԻԼ.
 1890

(Les poèmes antiques)

ԱՌ ՄԱՅՐՆ ԻՄ

Ի ծագել Արեգական յորժամ բնութիւն
 վերազարթնու ,
 Եւ ճըռուողեալ թռչնոց երկնից յասորս
 ծառոց մինչ ոստոսանն ,
 Եւ ի նուագս դաշնակաւորս փառաւորեն
 զՏէր Աստուած ,
 Մայր իմ զքեզ յիշեմ յայնժամ, յիշեմ ըզսէր
 քո մայրենի ,
 Ըզգութ քո ծընեկասէր, զանդուլ խընամըս
 քո զինէն ,
 Եւ ըզլըկաթ կաթողին ընդ իս քո սէր
 անհամեմատ .
 Յիշեմ ի ջերմ ծոց մայրենի, յատըկելիս
 յորժամ էի ,
 Կամ յածէի ընդ դալարիս, զորս գարուն
 սրբուէ ընդ դաշտ ,
 Կամ զընայի յոտն ի մատին թիթռանց
 ըզհետ թեթև ի քայլ ,
 Քո տեսեալ զիմոյ անմեղ կենցաղոյս քաղցր
 ըզսոյն վայելս :
 Աւլցեալ ի գութ գորով՝ համայր և խինդ
 գնային ըզքե .
 Իսկ ճըռաքաղ ըզմայառօք քաղցրաբուրիկ
 փունջս ծաղկանց ,
 Փափկիկ մատամբ կազմ եւ պատրաստ առ
 քեզ, մայր իմ, մինչ ձօնէի,
 Ընդունէիր՝ օրհնիս ի շուրթն և ի զուարթ
 տեսիլ դիմաց,
 Մանկութիւն գեղածաղիկ յայսքան ի սէր է
 հակամէտ ,
 Ի քէն միայն ուսայ, ի քէն, մայր իմ,
 Ժըխտեղ զայս կարեմ ոչ,
 Ըզբարին և ըզվըսեմ, ըզճըշմարիտ գեղեց-
 կին զարդ .

Այլ ո՞ ուսոյց ինձ սիրել ըզքեզ, մայր իմ,
 աղէ՛ ասա ,
 Ըզքեզ, որ աչք մերթ ի յերկինս հեղուր
 վտակս յորդ արտասուաց ,
 Եւ աղօթս վերառաքեալ ի լուրթ հեռի ի
 մէջ կամար :
 Ըզգայի ես զի կարմրագեղ այտքս թանա-
 յին յարտասուս նամ ,
 Ըզքեզ, մայր իմ առ որ գայի առ ի հան-
 գիստ խոնջ լե պարտաս :
 Ոչ ինչ զանխուլ են իսկ յինէն բանք ա-
 ղօթից քոց մայրական ,
 Զոր զերդ սաղմոս մաղթանաց զայս օրի-
 նակ բարբառէիր .
 «Ո՛ Սրարիչ, Ոգի բարձեալ յաւիտենից
 նըստեալ յաթոռ ,
 Որ ետուր ինձ աղախնոյ քում ի սփոփանս
 զայս ըզմանուկ ,
 Եւ արդ ի սմա զուղիս շնորհաց քոց մըշ-
 տարուղիս ծաւալեսիր ,
 Եւ հզօր ի հովանի աջոյդ փրկեա՛ ի փոր-
 ձութեանց,
 Ուսճալիր զերդ ուռենի սակաւ ամաց ի
 հոլովման
 Աճեսցի սա լինել նեցուկ ալևորեալ տիոց
 իմոց» :
 Մայր իմ ահա՛ զայստսիկ յաճախ ածեալ իմ
 ըզմտաւ ,
 Սէր անձկայրեաց սիրտ իմ տապի, զուրկ ի
 տեսոյ քումմէ, աւա՛ղ,
 Զի դու հեռի յինէն, մայր իմ կաս միշտ
 հեռի յինէն, այո՛
 Եւ ոչ իսկ խորհիս զինէն, որպէս երբեմն
 ընդ մեր յարկաւ .
 Այլ ես ոչ դադարեցայց եթէ՛ ի քուն թէ՛
 յարթմընի ,
 Խորհել ըզքէն յաւէտ, որ կեանս պարզե-
 ւեցեր ինձ յաշխարհի ,
 Ի ջերմաջերմ յարտասուս գերեզմանիդ թա-
 նալ ըզհող ,
 Աղօթս՝ հոգւոյդ յեղյեղել, տիեզերաց որ
 էից Հայր :
 1891 ֆեբր. 23 ԲԱՐՍԵՂ Ե. ԷՔՍԵՐՃԵԱՆ
 Ի Բերս

Արսօնասէր Ա. ՍԱՔԱՅԵԱՆ
 Տնօրէն—Խմբագիր
 ՄԻՋՐԱՆ ԱՍՔԱՆԱԶ
 Տպարար. ՆՇԱՆ 4. ՊԵՐՊԵՐԵԱՆ
 4. Պոլիս, Էսկի Զապքիէ նասսէսի, 61.